EU4Environment

Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան,
Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա

Բնապահպանական քաղաքականությունները և դրանց բարելավումը մեծ նշանակություն ունեն տնտեսական աճի, կայունության և մարդու բարեկեցության համար: Դրանք կարևոր են նաև կենսաբազմազանության պահպանման և կլիմայի փոփոխության մարտահրավերների հաղթահարման համար:

Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի նպատակն է օգնել Արևելյան գործընկերության վեց երկրներին (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) պահպանել և արդյունավետ օգտագործել բնական կապիտալը, ամրապնդել մարդու շրջակա միջավայրի բարեկեցությունը և խթանել տնտեսական աճը:

Համախմբելով բնապահպանության և էկոնոմիկայի ոլորտների դերակատարներին՝ «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագիրն աջակցում է քաղաքականության և օրենսդրական բարեփոխումներին՝ «կանաչ»պլանավորման և ներդրումների, նորարարական տեխնոլոգիաների ներգրավման, նոր բիզնես մոդելների ընդունման, «կանաչ» աշխատատեղերի ստեղծման միջոցով: Ծրագիրը նաև խթանում է պատշաճ բնապահպանական կառավարումը, պահպանվող տարածքների և անտառների արդյունավետ կառավարումը, կայուն առևտուրը: Ծրագրի տեխնիկական առաջադրանքը սահմանվել է բոլոր գործընկերների հետ փոխգործակցության արդյունքում:

Ծրագիրը հիմված է նախկինում համատեղ իրականացված ծրագրերի կարևոր ձեռքբերումների վրա, այդ թվում՝ «Կանաչ տնտեսություն Արևելյան հարևանության տարածաշրջանում» (EaP GREEN) ծրագիրը, Անտառային օրենսդրության կիրարկում և կառավարում (FLEG) ծրագիրը և Էմերալդ ցանցը, որոնք իրականացվել են 2017-18թթ.-ին: «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի հիմքում ընկած է ընդլայնված համագործակցությունը, որը ձևավորվել է 2017թ.-ի նոյեմբերի Արևելյան գործընկերության գագաթնաժողովին ընդունված **«2020թ.-ի 20 առանցքային արդյունքների»** շուրջ:

Ծրագիրը կիրականացվի հինգ միջազգային կազմակերպությունների կողմից՝ ՏՀԶԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ:

Ընդհանուր ուղղորդումն ապահովվում է Եվրոպական հանձնաժողովի կողմից:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել հետևյալ էլ. փոստի հասցեով՝
EU4Environment@oecd.org

#strongertogether

EaP 10 YEARS Eastern Partnership

© marcinjucha/shutterstock

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | WORLD BANK GROUP

Action implemented by:

OECD BETTER POLICIES FOR BETTER LIVES | UNECE | UN environment programme | UNIDO | WORLD BANK GROUP

EU4Environment

Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան,
Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա

Եվրոպական միության
կողմից ֆինանսավորվող
ծրագիր

© UBCstock/shutterstock

Նպատակ. Եվրոպական միության «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի նպատակն է օգնել վեց գործընկեր երկրներին պահպանել իրենց բնական կապիտալը և ամրապնդել մարդու շրջակա միջավայրի բարեկեցությունը՝ բնապահպանական միջոցառումներիաջակցության,«կանաչ աճի»հնարավորությունների ստեղծման և ցուցադրման, բնապահպանական ռիսկերի և ազդեցությունների արդյունավետ կառավարման մեխանիզմների սահմանման միջոցով:

Գործընկեր երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա

Ժամկետը՝ 2019-2022թթ.

Բյուջե՝ 20 միլիոն եվրո (ԵՄ ներդրումը՝ 19.5 միլիոն եվրո)

Ծրագրի իրականացման գործընկերներ՝ ՏՀԶԿ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն, Համաշխարհային բանկ

Ընդհանուր ուղղորդում՝ Եվրոպական հանձնաժողովի Հարևանության և ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր դիրեկտորատ և Շրջակա միջավայրի գլխավոր դիրեկտորատ

Գործողությունները համախմբված են հինգ գերակա արդյունքների շուրջ:

1. Կանաչ տնտեսությանը նպաստող որոշումների կայացում

- Աջակցել «կանաչ աճի» վերաբերյալ միջգերատեսչական քաղաքական երկխոսություններին, պլանավորման մեջ ընդգրկել **կանաչ տնտեսության թիրախները** և կայունության ապահովմանն առնչվող այլ հարցերը.
- Աջակցել **ներդրումային կարիքների** գնահատմանը.
- **Աջակցել միջազգային պահանջներին լիովին համապատասխանող ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) և անդրսահմանային շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) իրավական դաշտի բարեփոխմանը և կիրարկման համար անհրաժեշտ կարողությունների զարգացմանը.**
- **Կանաչ տնտեսության, բնապահպանական գործողությունների և կայուն կենսակերպի վերաբերյալ իրազեկության բարձրացում:**

Կատարողներ՝ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (համակարգող)

2. Շրջանաձև տնտեսություն և աճի նոր հնարավորություններ

- Աջակցել **փոքր և միջին ձեռնարկություններին** (ՓՄՁ-ներ)՝ ռազմավարական և ամենօրյա որոշումների կայացման գործընթացում կայունության գործոնների ներառման առումով.
- Խթանել **«կանաչ» արտադրանքների միասնական շուկային** առնչվող ԵՄ հայեցակարգերը և գործիքները.
- Աջակցել **«կանաչ» պետական գնումների քաղաքականությունների** մշակմանը և իրականացմանը.
- Հատուկ աջակցություն տրամադրել **թափոնների կառավարման** խնդիրների լուծման համար.
- Տեխնիկական աջակցություն տրամադրել **կանաչ տնտեսության գերակա ոլորտների բարեփոխումների** համար(էներգաարդյունավետություն, գյուղատնտեսություն/պարեն, շինարարություն, կայուն զբոսաշրջություն կամ տարածաշրջանային զարգացում).
- Աջակցել **էկոլոգիական արժեքի շղթայի** ձևավորմանը և ՓՄՁ-ների շրջանում **արտադրանքների նորարարությանը**:

Կատարողներ՝ **ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (համակարգող)**

3. Էկոլոգիական «խաղի պայմաններ»

- Աջակցել պետական կառավարման մարմիններին ստեղծելու **«խելացի» կանոնակարգեր** և քաղաքականության գործիքներ, որոնք կխթանեն խոշոր ձեռնարկությունների և ՓՄՁ-ների բնապահպանական կատարողականը.
- Բարձրացնել **իրավակիրարկումս ապահովող կառույցների և մեխանիզմների** արդյունավետությունը՝ բնապահպանական պահանջների կատարումը խթանելու համար.
- Աջակցել պետական կառավարման մարմիններին **«կանաչ» պետական ներդրումների ռազմավարությունների և ծրագրերի մշակման և ծախսերի նախահաշիվների կազմման** գործում.
- **Աջակցել բնապահպանական կառավարման բնագավառում վարչական կարողությունների զարգացմանը.**
- **Վերապատրաստել թիրախային քաղաքացիական ծառայողների լայն զանգվածներին և այլ շահագրգիռ կողմերին:**

Կատարող՝ ՏՀԶԿ

4. Էկոհամակարգային ծառայություններ և կենսապահովման միջոցներ

- **Ստեղծել պահպանվող տարածքների միասնական ցանց, որում ընդգրկված են ԵՄ-ն և հարևան երկրները.**
- Աջակցել **անտառների պահպանության և կայուն օգտագործման** համայնքային գործողություններին՝ ոչ փայտանյութային ապրանքների արտադրությունն ավելացնելու, կենսազանգվածի հետ կապված էներգաարդյունավետությունը բարձրացնելու նպատակով.
- Ապօրինի վաճառքը սահմանափակող և օրինական վաճառքը խթանող գործողություններ.
- Աջակցել **էկոհամակարգային ծառայությունների կայուն կառավարման համար նորարարական ֆինանսավորման սխեմաների** վերհանմանը և մշակմանը:

Կատարող՝ **Համաշխարհային բանկ**

5. Գիտելիքների փոխանակում և համագործակցություն

- **Հասարակական իրազեկման ռազմավարական գործողություններ՝** միջոցառումների տեսանելիությունը բարձրացնելու նպատակով.
- Ծրագրի տարբեր բաղադրիչների **տարածաշրջանային համակարգում.**
- **Առաջընթացի վերահսկում՝ հաշվի առնելով տնտեսական և բնապահպանական նպատակները, և «կանաչ աճի» ցուցանիշների հիման վրա հաշվետվությունների պատրաստում:**

Կատարող՝ **ՏՀԶԿ՝ համագործակցելով բոլոր գործընկերների հետ**

EaP 10 YEARS Eastern Partnership